ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ծառայությունների մատուցման տեխնիկական առաջադրանք

Վարորդ

Լոգիստիկայի պատասխանատուի վերահսկողության ներքո Վարորդը պատասխանատու է Acted կազմակերպության աշխատակազմին ապահով և անվտանգ փոխադրման ծառայություններ տրամադրելու համար:
Վարորդը պետք է ապահովի, որ տրանսպորտային միջոցները պատշաճ կերպով շահագործվեն և պահպանվեն՝ Acted-ի ներքին ընթացակարգերի համաձայն: Որպես Լոգիստիկայի բաժնի անդամ՝ Վարորդը նաև աջակցում է գնումների գործընթացներին՝ նպաստելով լոգիստիկ գործունեության արդյունավետ կառավարմանը:
Տրամադրելով հուսալի և անվտանգ փոխադրման ծառայություններ՝ նա պարտավորվում է աշխատանքի ընթացքում ցուցաբերել ամենաբարձր մակարդակի գաղտնիություն, բարեխղճություն, ազնվություն, դրսևորել պատասխանատվության խոր զգացում, ունենալ պրոտոկոլային և անվտանգության հարցերի գերազանց իմացություն: Նա պետք է ցուցաբերի քաղաքավարություն, նրբանկատություն և կարողություն՝ համագործակցելու տարբեր ազգային և մշակութային ծագում ունեցող անձանց հետ:

ՀԻԵՐԱՐԽԻԿ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անմիջական ղեկավար: Ֆինանսների և Լոգիստիկայի Ղեկավար

Տեխնիկական հարցերով աջակցություն: Լոգիստիկայի օգնական Պատասխանատու է:

-

ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներքին հարաբերություններ:

- Acted աշխատակազմ

Արտաքին հարաբերություններ:

- Մատակարարներ

ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Պատշաճ և անվտանգ կերպով իրականացնել Acted կազմակերպության աշխատակիցների և այցելուների փոխադրումներ՝ լիովին հետևելով անվտանգության և ապահովության բոլոր ընթացակարգերին: Հետևել տրանսպորտային ուղեցույցներին՝ համաձայն Acted-ի տրանսպորտային կանոնակարգերի, ներառյալ՝ փաստաթղթերի պատշաճ ձևակերպում, երթուղու պլանավորում և մեքենայի օգտագործման ընթացակարգերի պահպանում:
- Աջակցել լոգիստիկայի բաժնին՝ ժամանակին և արդյունավետ կերպով մատակարարներից և այլ գործընկերներից փաստաթղթեր, ապրանքներ և պարագաներ հավաքելու և առաքելու նպատակով:

ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

Տրանսպորտային գրանցամատյան: Ապահովել, որ տրանսպորտային գրանցամատյանը լրացվի ճշգրիտ՝ յուրաքանչյուր օգտագործման օր, ներառելով՝

- Մեկնելու ժամը և ամսաթիվը

- Ժամանելու ժամը և ամսաթիվը
- Կիլոմետրաժը մեկնելու պահին
- Կիլոմետրաժը՝ նպատակակետ հասնելու պահին
- Ժամանման վայրի մանրամասները
- Վարորդի և ուղևորների անուն ազգանունները
- Վարորդի և ուղևորների ստորագրությունները
- Ապահովել, որ յուրաքանչյուր աշխատանքային այցից առաջ և հետո աշխատակազմի անդամները ստորագրեն տրանսպորտային գրանցամատյանում
- Պարբերաբար ստուգել, որ գրանցամատյանում կատարված գրառումները համընկնեն տրանսպորտային միջոցի հաշվիչի (կիլոմետրաժի) տվյալների հետ:

Տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի և անվտանգության ստուգումներ

- Յուրաքանչյուր տեղաշարժից առաջ ստուգել բոլոր անվադողերի վիճակը՝ ապահովելու համար ճանապարհային անվտանգությունը և մեքենայի շահագործման անխափան աշխատանքային վիճակը:
- Շաբաթական կտրվածքով ստուգել՝
    - Յուղի մակարդակը
    - Ջրի մակարդակը
    - Առաջին օգնության տուփի պարունակությունը
    - Կրակմարիչի վիճակը
- Վարորդը պարտավոր է ցանկացած մեխանիկական անսարքության վերաբերյալ անմիջապես զեկուցել լոգիստիկայի օգնականին:
- Անհրաժեշտության դեպքում վարորդը պարտավոր ավտոմեքենան տանել համապատասխան մասնագետի մոտ՝ անսարքությունը վերացնելու նպատակով:

Անվտանգություն և Ապահովություն

- Ուղևորների անվտանգությունը Վարորդի գլխավոր պատասխանատվությունն է: Պետք է մինչև մեքենայի տեղաշարժվելը բոլոր ուղևորներին, այդ թվում՝ ետևի նստատեղերին նստածներին, պետք է հիշեցնել, որ կապեն անվտանգության գոտիները:
- Պետք է խստորեն հետևել ազգային ճանապարհային երթևեկության կանոններին և Acted կազմակերպության տրանսպորտային ներքին կարգավորումներին:

- Հետևել արագության սահմանված սահմանափակումներին և նվազեցնել արագությունը շուկաներին, դպրոցներին, կրոնական պաշտամունքի վայրերին և այլ մարդաշատ վայրերին մոտենալիս:
- Պահպանել անվտանգ հեռավորություն Ձեր և առջևում շարժվող տրանսպորտային միջոցի միջև՝ ապահով արգելակման և մանևրի հնարավորություն ունենալու համար:
- Հետևել և պահպանել ճանապարհային բոլոր ազդանշանները, նշանները և առաջնահերթության կանոնները, զիջել ընթացքը շրջանաձև խաչմերուկներում և «Կանգ» նշանի դեպքում:
- Հարգել նախատեսված երթուղու ժամանակացույցը: Վարորդը պարտավոր է ուղևորներին տեղեկացնել յուրաքանչյուր ուղևորության մոտավոր տևողության մասին, սակայն պատասխանատվություն չի կրում ուշ մեկնման համար՝ պայմանավորված այլ անձանց ուշացումներով:
- Հարգալից կերպով հիշեցնել ուղևորներին, որ նրանց ուշացման հետևանքով առաջացած ուշացումը վարորդի պատասխանատվության ներքո չէ:
- Տրանսպորտային միջոցը չի թույլատրվում թողնել բաց վիճակում՝ բանալիները ներսում, նույնիսկ կարճ ժամանակով: Անհրաժեշտ է ապահովել, որ մեքենան չօգտագործվի օտար կամ չլիազորված անձանց կողմից:
- Անհապաղ տեղեկացնել Լոգիստիկայի օգնականին ցանկացած վթարի, միջադեպի կամ անվտանգության հետ կապված մտահոգության առկայության դեպքում:
- Ուղևորին իջեցնելուց հետո վարորդը պետք է ստուգի, որ մեքենայի սրահում ոչինչ չի մոռացվել:
- Յուրաքանչյուր ուղևորությունից հետո վարորդը պարտավոր է լվանալ մեքենան և մաքրել սրահը՝ հիգիենան և շահագործման պատրաստ վիճակը ապահովելու նպատակով:

Ընդհանուր սկզբունքներ

- Կրել պատշաճ հագուստ և հանդես գալ բարեկիրթ տեսքով՝ մշտապես պահպանելով կոկիկ և պրոֆեսիոնալ արտաքին տեսք:
- Որպես Acted կազմակերպության ներկայացուցիչ՝ կարևոր է, որ բոլոր շփումները և հաղորդակցությունները արտացոլեն կազմակերպության մասնագիտական, քաղաքավարի և աջակցող արժեքները:
- Պահպանել գաղտնիություն Acted-ի գործունեության, աշխատակազմի տեղաշարժերի և լոգիստիկայի հետ կապված զգայուն տեղեկատվության վերաբերյալ:

- Չբացահայտել լուսանկարներ կամ երթուղիներ՝ հանրայնորեն կամ չլիազորված անձանց հետ:

Աշխատանքային ժամեր և ճկունություն

Վճարումը կատարվում է բացառապես փաստացի մատուցված ծառայությունների հիման վրա՝ հետևյալ սկզբունքով.

- Օրավարձ (Full Day Fee). Կիրառվում է, երբ ծառայությունների մատուցման տևողությունը տվյալ օրվա ընթացքում գերազանցում է 4 ժամը:
- Կես օրվա սակագին (Half Day Fee). Կիրառվում է, երբ ծառայությունների մատուցման տևողությունը տվյալ օրվա ընթացքում չի գերազանցում 4 ժամը:

Հաշվետվողականություն

- Յուրաքանչյուր ամսվա վերջում Կատարողը ներկայացնում է մատուցված ծառայությունների Հանձնման-ընդունման արձանագրություն և Ժամանակացույց (Timesheet), որտեղ հստակ նշվում են աշխատած օրերը (ամբողջական կամ կես օր):

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (KPI)

- Արագության խախտումների կամ ճանապարհատրանսպորտային միջադեպերի տոկոսային ցուցանիշ
- Գրանցամատյանում ճշգրիտ և ժամանակին լրացված գրանցումներ
- Մեքենայի մաքրության պահպանման մակարդակ
- Ժամանակին մեկնումների/ժամանումների տոկոսը
- Աշխատակազմի կողմից ստացված բողոքների կամ գովեստների քանակը
- Սպասարկման և տեխնիկական ստուգումների ժամանակացույցի (շաբաթական/օրական) պահպանման մակարդակ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- Միջնակարգ կրթություն
- Նվազագույնը 5 տարվա վարորդական փորձ, որից ցանկալի է առնվազն 2 տարին պետք է լինի մասնագիտական վարորդական փորձ:
- Գործող հայկական վարորդական վկայական, B կարգի
- Հայաստանում հիմնական և երկրորդային ճանապարհների մասին գիտելիքներ
- Ճանապարհային քարտեզների և GPS գործիքների ընթերցման և կողմնորոշման ունակություն
- Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և ավտոմեքենայի մեխանիկայի վերաբերյալ հիմնական գիտելիքներ
- Ճանապարհորդելու պատրաստակամություն
- Սարքավորումներ և տարբեր գույք մեքենայի մեջ տեղադրելու և տեղափոխումը կատարելու կարողություն

- Որոշ գրասենյակային սարքավորումների օգտագործման ունակություն՝ համակարգիչ, պատճենահանող սարք, տպիչ, տեսախցիկ, բջջային հեռախոս, GPS և այլն
- Acted-ի արժեքներին և ներքին կանոնակարգերին համահունչ վարքագծի դրսևորում
- Կանոնակարգերի պահպանում, թափանցիկություն և հաշվետվողականություն ապահովելու կարողություն
- Նվիրվածություն և պատասխանատվություն
- Խնդիրներին ստեղծագործ մոտեցում ցուցաբերելու ունակություն և նորարարական մտածողություն
- Անգլերենի իմացությունը ցանկալի է

Դիմելու կարգը

Հետաքրքրված թեկնածուները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը մինչև **2026 թվականի մարտի 20-ը**.

- Մոտիվացիոն նամակ (անգլերեն կամ հայերեն լեզվով)
- Ինքնակենսագրական /CV/ (անգլերեն կամ հայերեն լեզվով)
- Երեք անձի կոնտակտային տվյալներ՝ որպես երաշխավոր, ներառյալ վերջին աշխատավայրի ղեկավարի տվյալները (եթե կիրառելի է)

Ձեր ամբողջական հայտի փաթեթը ուղարկել հետևյալ էլ. հասցեին՝ armenia.jobs@acted.org, թեմայի դաշտում նշելով՝ **"DRIVER" :**
Ոչ լիարժեք և անավարտ հայտերը չեն դիտարկվի:
Միայն նախնական ընտրություն անցած թեկնածուները կհրավիրվեն՝ հարցազրույցի և հավելյալ մանրամասների համար:
Խնդրում ենք նկատի ունենալ, որ հայտերը կդիտարկվեն ըստ ստացման հերթականության, և եթե համապատասխան թեկնածու ընտրվի մինչև նշված վերջնաժամկետի ավարտը, հայտարարությունը կարող է հանվել: Այդ պատճառով խորհուրդ է տրվում դիմել հնարավորինս շուտ: